«Եւ ապա յետ այնորիկ գումարէր Օթմանն զզօրս նախարարացն Հայոց յերկիրն Աղուանից ի գրունս Կասպից ի Դարբանդն կոչեցեալ քաղաք, որ է պարիսպ և պատուար ամրութեան շինեալ ընդդէմ զօրացն Հոնաց և Խազրաց»։

Թէ Զօղայն է Դարբանդ քաղաքը, ցուցանէ բանն Մովսիսի Կաղանկատուացւոյ (ԺԱ. 105), որ ասէ.

«Գայշաք իշխան Պարտաւաբերդի կարգեալ ի Խոսրովու արքայէ Պարսից, յարշաւելն Ջէբուխաքան Խազրաց թագաւորի ընդ Տաթ որդւոյն յերկիրս Աղուանից . . . ։ Հայէր տեսանէր թէ զի՞նչ անցք անցանիցեն ընդ պահապանս մեծ քաղաքին Զողայ և ընդ գումարտակս սքանչելի պարսպաց նորա, զոր բազում ծախիւք թագաւորացն Պարսից մաշեալ էր զաշխարհս իւրեանց, գումարելով ճարտարապետս և հնարելով ազգի ազգի նիւթս ի շինուածս մեծասքանչ գործոյն, որով փակեցին, աղխեցին ընդ լեառնն Կովկաս և ընդ մեծ ծովն արեւելից»։

Եւ գրէ (Գիրք Բ. Գլ. Դ. յեր. 91).

«Յետ այսորիկ գրեցաւ ի Խազրաց աշխարհս Աղուանից, հրրակէզ եղեն եկեղեցիք և կտակարանք։ Ապա յերկրորդ ամին Խոսրովու արքայից արքային, յորժամ սկիզբն Հայ թուականին եղեւ (551). ի սոյն ամի փոխեցին զաթոռ Հայրապետութեան Աղուանից ի Զողայ քաղաքէն ի մայրաքաղաքն Պարտաւ, վասն հինահալած արշաւանաց թշնամեաց խաչին Քրիստոսի և նստուցին Հայրապետ զՏէր Աբաս ի գաւառէն Մեծ-իրանց որ կալեալ զաթոռն ամս քառասուն և չորս սրբական վարուք կեցեալ՝ փոխադրի յանմահ կեանս»։

Իսկ Վարդան աշխարհագիր վարդապետն Դարբանդի համար այսպէս գրէ.

Սկսեալ ի գրանէն Հոնաց, որ է գուռն Ալանաց երկաթի, զոր եդեալ Աղէքսանդր Մակեդոնացին, զի նա ժողովեաց յամենայն ազգաց զփանաքիս և չկարճահասակս, զխեղս, զկաղս և զկոյրս, զգողս և զվնասակարս և տարեալ ի կողմն հիւսիսոյ բնակեցոյց